

ԲԱՆԱԿՑԵԼ

Posted on January 24, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Ռուբեն Յովակիմեան, ՍԵՆ Ռաֆայել, 15 Յունուար 2022

**Կեանքը նման է հեծանիկի. միշտ պետք է առաջանալ,
որ հաւասարակշռութիւնը պահպանուի: Էյնշտեյն**

Կրքերը բորբոքուած են հայութեան շրջանում՝ սփիւռք թէ հայրենիք, Թուրքիոյ հետ բանակցութիւնները սկսելու առիթով Մոսկուայում Պոլտինի հսկողութեան ներքոյ: Յայտնի չէ այս գաղափարի ակունքը եւ ոմանք այն համարում են թուրքական խաղ: Պէ՞տք է հաւատալ, թէ թուրքը՝ պարտաւորուած, կամ կամովի փափագում է դարձնել Էջը, ենթադրելով, թէ հետագային թաքնուած տարբեր անակնկալների առջեւ գտնուենք: Ամեն մարդ իւրովի է մեկնաբանում ու բացատրում երեւոյթը՝ հոսկ դժուար է նախընտրութիւն տալ որեւէ մէկին, քանզի կարծիքներից իւրաքանչիւրը ունի յոռի կամ լաւատես դիրք, մինչդեռ սկսուած ընթացքը դադարեցնել կարելի չէ: Ցաւալի է, որ փոխանակ գլուխ գլխի գալով, նման կարեւոր համագային խնդրոյ շուրջ, երբ երկարաժամկետ ապագայի մասին է խօսքը, եւ բոլորը միասին խելք-խելքի գումարելով՝ ծանր ու թեթեւը նժարին դնելով կարողանան մեզ համար շահաւետ եզրակացութեան յանգել՝ լիովին խրուել են խմբակային տարածայնութիւնների մէջ, մինչ խորհելու շատ տեղ կայ :

Բնական է նաեւ, որ անհաշտ դրացիները չեն կարող յաւերժ պայքարի մթնոլորտում մնալ եւ պարտաւոր են մի օր իրար հանդուրժել, ուստի բանակցութիւնների գնալը տրամաբանական է, միայն թէ չափազանց լրջութեամբ է հարկաւոր կշռադատել երկկողմանի խնդիրների կարեւորութեան աստիճանն ու հետեւանքը՝ հոսկ մասնագետների յանձնաժողովի ստեղծումը եւ տարբեր ուժերի համատեղ գործելը միայն դրական կարող է լինել:

Ո՞ւմ համար է գաղտնիք, որ ընդամենը ամիսներ առաջ թուրքերը ջանք չխնայեցին՝ իրենց կրտսեր եղբօրը՝ նեցուկ լինելով, ջարդ ու փշուր անել մեր տարածքները, թերեւս մեզ պաշտպան դաշնակցի օրհնութեամբ եւ, որ այդ դժոխքը դեռ շարունակուում է գրեթէ ամեն օր, իսկ սեղանի շուրջ բանակցութեան նստելու կարեւոր նպատակը՝ արդեօք Ցեղասպանութիւնը իր ետեւամբ մոռացութեան մատնելը չէ՞ միաժամանակ որքան կարելի է նոր զիջումներ կորզել Հայաստանից, որոնց ցանկը բաւական երկար է եւ չմոռանանք, որ անելի քան մէկ դար անց այդ մասին երբեւէ նուազագոյն զոջումի արտայայտութիւն չի եղել, իսկ բարոյական, հողային կամ նիւթական հատուցման մասին՝ լսել անգամ ցանկացող չկայ, իսկ մեր խոշոր գլուխ ունեցողներից ոմանք դեռ վստահօրէն կառչած են մնացել Վիլսոնի քարտեզի անուրջին, բայց թուրքերը պատրաստ են այն ընդունել: Ո՞վ գիտի: Իրականութիւնը բոլորովին տարբեր է, եւ մեզանից ամեն ոք անելի լուրջ եւ խոհեմ լինելու պարտականութիւնն ու պահանջն ունի: Միթէ՞ այս քայլը յարմար առիթ չէ Կովկաս մտնելը եւ ռուսներին հակադրուելը՝ զանց չառնելով հսկայական քանակի զենքի վաճառքը, եւ կարելի է ենթադրել, որ երկու

եղբայրների սիրոյ տեսարանները խաբկանք են եւ ունեն մէկ հիմք՝ բացել դուները դէպի համաթուրքական տարածք: Չէ՞ որ յայտնի է շատերին, որ դիւանագիտութեան մէջ չկայ զգացում այլ **շահ** եւ մենք եւս պիտի փնտրենք մերը:

Տեղին է նշել, – որքան որ փոքր է մեր երկիրը, այն փրկիչ օղակի դեր կարող է խաղալ Թուրքիոյ քայլերին՝ մեծերին հաճելի լինելու եւ իր յարաբերութիւնները շահաւետ բարելաւելու, ինչպէս նաեւ ոմանց հետ հաշտուելու նպատակով: Այդ ընթացքին իր տնտեսութեան քայքայուող փաստը անտեսելով, Երդողանը սնափառ յայտարարութիւնների կողքին բարիդրացիական հակումներ է ցուցադրում, որ կարող է խաբկանք լինել:

Այսուհանդերձ ի՞նչ է բանակցութիւնների բուն նպատակը կողմերի համար: Թուրքիոյ քաղցր անուրջն է՝ լիովին տիրանալ Հայաստանին, որ ունի բազում դրական առաւելութիւններ եւ (թերեւս այդ է պատճառը Բաքուի մէջ թուրք բարձրաստիճան սպաների խարիսխումին), որի հետ մէկտեղ արհամարհելի չէ «Հայ դատ»ի գործունեութեան չէզոքացումը ԱՄՆ-ում եւ այս բանակցութիւնները պատրուակ են բարձր գոռալու, թէ խնդրի լուծումը սեղանի վրայ է՝ յուսալով, որ այն կարող է երկար տեւել, որի հետ կայ ապրանք փոխանակելու փոքր, բայց էական գործօնը, որ թոյլ է տալիս ներխուժել որեւէ երկիր եւ դիրքեր հաստատել, ինչպէս այն եղաւ Վրացական Բաթում քաղաքում, ուր դարձել են տիրող: Հնարաւոր է անտեսել հայ-ազերի սահմանների կացութիւնը, եւ միջանցքի խնդիրը, որ իրենց համար կենսական է: Այս դէպքում է, որ ծայրայեղ զգօն լինելը անելորդ չէ, իսկ սահմանների խախտումները անմեղ դրուագներ եւս չեն, այլ ծրագրուած նկրտում:

Այլ է պարագան մեզ համար, քանզի տասնամեակներ լինելով շրջափակուած, մեր փորձերը՝ տնտեսութեան վիճակը ճգնանքով կարգի բերելու քայլերը, թշնամու յարձակողական մթնոլորտում մեծ յաջողութեան չեն հասել՝ մնալով միշտ դրացիների ցանկութիւններից կախուած:

Ակնյայտ է, որ Արցախի կարգավիճակը, սահմանների հանդարտութիւնը եւ Սիւնիքի հետ փոխանակման թերի գաղափարը (Այն քննարկուել եւ մերժուել է Քոչարեանի օրոք) խնդիրների խնդիրն են լինելու, որ հիմնական դրոյթն է ամբողջականութեան շրջանակում, թէեւ այն տիւմար է, բայց խիստ կարեւոր է իսլամական ազգերի միացման երազի կատարմանը: Այս դէպքում ո՞վ կարող է հերքել, թէ Ղազախստանի բուռն բախումներին Երդողանի մատը խառը չէ:

Ի վերջոյ, Ռուբէն Ռուբինեանը հայկական կողմի բանագնացի առաքելութեան հանգամանքով Մոսկուայի մէջ հանդիպեց թուրք Սերդար Քըլըչի հետ յունուար 14-ին, ինչպէս նախատեսուած էր: Բանակցութիւնների մեկնարկը արդէն տեղի ունեցաւ եւ ըստ որոշ լուրերի, այն ընթացել է առանց նախապայմանների եւ կողմերը համաձայնուել են շարունակել նոյն ձեւով դէպի ամբողջական լուծումների՝ ի շահ

տարածաշրջանի կայունության եւ տնտեսական բարգաւաճումի: Այս անսախաղէպ է
եւ միջազգային քաղաքագետներից ոմանք այս հանդիպումը համարում են
կառուցողական կարելոր քայլ դէպի առաջ: Անյայտ է նոր հանդիպման տարեթիւը, որ
կը ծանուցուի հետագային: Կարելի՞ է թուրքի փոխուելուն հաւատալ: Սպասենք:

Երգիծանկարը՝ Toto-ի վերադարձը Armenian Mirror Spectator-էն

There are no comments yet.